XVI

ԳԱԲՐԻԵԼ ԹՈԽԱԹԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

Այս բնագիրը վերցրել ենք Հ. Տաշյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական Մատենադարանին ի Վիեննա» աշխատությունից[1]։ Մեզ հետաքրքրող ձեռագիրը ցուցակում կրում է 21 №-ը «Նկարք և ժամանակագրութիւն» վերնագրով։ Ձեռագրի մասին Հ. Տաշյանը հետևյալն է գրում. «Մատեանս է ոչ բուն գրութիւն, այլ հաւաքածոյ տետր մը նկարուց հանդերձ այլևայլ յիշատակագրութեամբք, բայց կան նաև քանի մը մանր գրություն խառն նյութով։ Նկարներուն վրան և ներքևը գրուած են յիշատակագրութիւնք»[2]։ Հրատարակիչն այս ամբողջ հիշատակագրությունները բերել է ցուցակում «Ցիշատակագրութիւնք ժամանակագրականք»[3], «Ցիշատակագիր ժամանակագրութիւնք»[4], «Ժամանակագրութիւն»[5] վերնագրերի ներքո։

Ժամանակագրության առաջին վկայությունը վերաբերում է 1696 թվականին, իսկ վերջինը՝ 1695-ին։ Այստեղ տեղեկությունները դասավորված են ոչ ժամանակագրական կարգով։ Այս հանգամանքը նկատի ունենալիս ժամանակագրության սահմանները ձգվում են 1685—1697 թթ. շուրջ 12 տարվա անցուդարձ։ Հրատարակչի հաղորդմամբ «Գիրքը ժողովածու է նկարներու, ուր կան նկարք տանց, անձանց, ծաղիկք, շրջանակք զարդարուն ևն հեղինակէն նկարուած հանդերձ յիշատակագրութեամբք... գրիչ ե նկարիչ... Գաբրիէլ անունն»[6], թեև մեր վերցրած վկայությունների մեջ հեղինակն անդրադառնում է նաև իրեն, բայց և ոչ մի տեղ իր անունը չի նշում։ Անկասկած, նա եղել է հայ առևտրական, որովհետև նախ գրում է թե «խրիտ (առևտուր) եմ արեր», և հիշում իր բազմաթիվ երկրներ գնալու մասին, երկրորդ՝ ձեռագրում տարբեր առիթներով տեղ են գտել զանազան ապրանքների գներ։ Ժամանակագրությունը մեծ մասամբ հեղինակի ընտանիքին վերաբերող տեղեկություններ են, թեև կան և մի շարք պատմական նշանավոր դեպքերի հիշատակություններ՝ Պյոտր I-ի կողմից Ազով բերդի գրավման, ավստրո-թուրքական կռիվների մասին և այլն։

Մի քանի վոքրիկ վկայություններ, որոնք վերաբերում են ձեռագրի նկարներին, թե երբ է գծագրվել, օրինակ «եկեղեցւոյ մը նկար։ Տակը «գրե-

1 Վիեննա, 1891, էջ 29—33։
2 Նույն տեղում, էջ 29։
3 Նույն տեղում, էջ 29։
4 Նույն տեղում, էջ 30։
5 Նույն տեղում, էջ 31, 33։
6 Նույն տեղում, էջ 29։

ցաւ թվոյն 1697 յունիսի 15. և ի Հայոց ՌՃԽԶ յունիսի Ե ի Պասալով», կամ «եկեղեցի և ս. Պետրոս առաքելոյ նկար։ Տակը. «գրեցաւ թվոյն 1697 մայիս 10 ի Պասալով և ի Հայոց ՌՃԽԶ մարտի Իդ[1] և այլն։ մեր հրատարակության ընագրից բաց թողինք։

Սույն հրատարակության ընագրում նշված են Տաշյանի Ցուցակի էջերը՝ տվյալ էջի առաջին սյունակը նշել ենք ա, երկրորդը՝ բ։ Փոփոխված է նաև կետադրությունը, որովհետև Հ. Տաշյանը պահել է ձեռագրում եղածը։

[1] էջ 30։

Թվոյն 1696 նոյեմբեր 15 ի Պոասլով[1] էի ընտանեօքս։ Եւ 29բ
ի Հայոց թվոյն ՌՃԽԵ նոյեմբերի Ե (5) էինք ի Պոասլով. այ-
սուհետև դիտելին Աստուած է, թէ ուր պիտի բնակիմք։

Թվոյն 1696 յոգոստոսի ամսոյ 20 պատերազմեցան Նէմցան
5 ու Թուրքն[2]. և էր Նէմցանու սէրազդէրն քուրվիրշտն Սաքսն[3], որ է
լոթռան[4], ոչ կարացին յաղթել միմեանց. ապա սակաւ Թուրքն
զէն արաւ Նէմցայու, մէկ քանի ճէնէրալ ինկաւ, մէկն ճէնէրալ
Հայեղլերն է, այլոց անուն չեմ գիտեր։

Թվոյն 1696 յուլիսի 15 փիրինծ Սաւոյն հաշտեցաւ հետ
10 Ֆռանցա թագաւորին[5]։

Թվոյն 1697 հաշտեցան Ինկիլիզն ու ֆէլէմէնկն հետ Ֆրան-
‖ցայու թագաւորին և հաշտեցուցին եվրատօրն այլ ի հետ 30ա
Ֆրանցյուսին[6].....

Թվոյն 1697 փետրվարի 28, այլ և Հայոց թվոյն ՌՃԽԶ
15 փետրվարի ԻԸ (28) Պոասլով դրեցի այս տէֆտէրս, որ Պոասլով
խրիտ իմ արեր Նիրընպէոքու[7] ըղալ[8]։.....

Թվոյն 1696 յունիսի 10 մեռաւ Լէհաց թագաւորն, որ էր 30բ
Սոպէցկին[9] ի Վարշով և ունի երեք որդի և մեկ դուստր. մեծ որ-
դոյն անուն է՝ Ետքուփ, միջնեկ որդոյն անուն է՝ Աղեքսանդրի
20 և փոքր որդոյն անուն է Կոստանդին։ Եւ դուստրն առեր է տուքս
տու Պավերան։ Մեծ որդին Ցեաքուպն առեր է եվրատօրին քէնին
և է պաճանախ եվրատօրին։

Թվոյն 1697 յոգոստոսի 15 թագաւոր քուրվիրշտն Սաքսն[10] 31ա
ի Լէհաց ազդին, որ էր լոթռան և եղև կաթուլիկ, ապա Լէհաց
25 մեծ իշխանքն կէսն կուզին զինքն, կէսն չէ։

Թվոյն 1696 յուլիսի ամսոյ 10 Մոսկոֆու թագաւորն առաւ
Ազախ վէրայով և ի Հայոց թվոյն ՌՃԽԵ յունիսի Լ (30)[11]։

Թվոյն Հայոց ՌՃԼԴ, Լաթենացոց 1685, ես եկի սեպ-
տեմբերի 20 Թուրքաց երկրէն՝ Պ[է]լրզատու[12] ի Պուտիմ[13], անտի
30 Գոմորան[14], որ է Մաճարու երկիր, անտի Ցեանըզ[15], անտի հոկ-
տեմբերի 1 եկի ի Վեննա, որ է Պէշ և է թախտ ենվերատօրին։

Թվին ՌՃԼԵ-ին և Լաթենացոց 1686 ես պսակ առի որ է
ամուսնանալ, ի Վեննայ, յունվարի 15, սուրբ Ըստեփաննոս եկե-
ղեցին, որ է եպիսկոպոսարան։

35 Թվոյն 1685 և ի Հայոց թվոյն ՌՃԼԴ-ին սուլթան Մէհմէտն
իջեցուցին իւր թախտէն և իւր եղբայր սուլթան Սուլէյմանն

թագաւորեցուցին ի Կոստանդինուպոլիս[16]. զսուլթան Մէհմէտն
Կեօղ խափսին դրին և մեռաւ այնպէս։

Դարձեալ թվոյն 1687 մեռաւ սուլթան Սուլէյմանն և թա-
գաւորեաց իւր եղբայրն սուլթան Ահմէտն և ի Հայոց թվոյն
5 ՌՃԼԶ։

Թվոյն 1686 և ի Հայոց ՌՃԼԵ-ին սեպտեմբերի 2, օրն երկու-
շաբթի, կէս օրէն ետոյ՝ Բ (2) ժամուն, Նէմցայու ազգն առաւ ի
Պուտիմ ի Թուրքէն։ Եւ էր Պուտիմու մէջն վէզիր Ապտի փա-
շան, յէնիչէրի տղայութենէ ելած էր, և այլ Սուլէյման փաշան,
10 որ էր քեահեայ պէկութենէ ելած և այլ Կիշի Ահմէտ աղան էր
քեահեայ պէկի, և էր յէրլի յէնիչէրի աղասի էր Սաքչալի Մէհ-
մէտ աղան, որ Մէմի աղա օղլի կասեն իւրեան, Սուլէյման փա-
շան Կիշի Ահմէտ աղան և Սաքչալի Մէհմէտ աղան գերի եղան և
գին տվին՝ ելան, ապա Ապտի փաշան ըսպանեցին Նէմցաներըն
15 յիւրուշ եղած օրն[17]։

Եւ այլ այս տարոյ մէջն հոկտեմբերի ամսոյ գնաց փիրինծ
Լոյն, որ է մարկոօֆ տէ Պօտն, էատ Փէչօյ, Շքլովուշ և Դավուշ-
վար։

Դարձեալ թվոյն 1687 և ի Հայոց ՌՃԼԶ-ին յօգոստոսի 25
20 Նէմցան առաւ Օսէկ և Փօճօղայ[18] և էր սէրազդէր ճէնէրալ Տանի
Վէյթն։

Թվոյն 1688 և ի Հայոց ՌՃԼԷ-ին յունվարի 9 Նէմցան
առաւ Էկրէ[19] վէրայով, և շատ այլազգի քրիստոնէ եղաւ մնաց
Էկրէ։ Եւ ի սոյն ամսոյ եփրատօրն իւր որդին թագաւոր տրաւ
25 Մահարու ի Փօժօն[20]։

Թվոյն 1688 և ի Հայոց ՌՃԼԷ յունիսի ամսոյ օ Նէմցան
առաւ Ըստօնի Պէլրրդաս վէրայով. և էր միջի փաշան տէրէնտէցի
շէյխ օղլի Ահմէտ փաշան երեսի զրերթն և ինքն ու միջի լինող
Թուրքն ելան գնացին դէպի Թունայու Պէլրրդատ։

30 Թվոյն 1688 քուրվիրշան, որ է առաքայ տու Պավէրան, սա
էատ Մեծ Պէլրրդատն ի Թուրքէն յիւրուշով սեպտեմբերի ամսոյ 15։ 31բ

Դարձեալ թվոյն 1689 և ի Հայոց ՌՃԼԸ յունիսի 5 առին
Սէկէվթար[21] վէրայով, միջի Թուրքն ճամբեցին դէպի Սոֆիայ։

Թվոյն 1690 առին Դանիժայ[22] վէրայով, որ է Սէկէթվարու
35 Գ (3) օրէն ճանապարհ ի ներս։

Դարձեալ թվոյն 1691 առին զՎարատ[23] վէրայով, և էր Նէմ-
ցայու ազգէրին սէրազդէրն ճէնէրալ Հայիզլէրն, սա էատ Վարատ։

Թվոյն 1691 մարտի ամսոյ 12 Ըստամպոլ թագաւորեաց
սուլթան Մուստաֆայն, որ է որդի սուլթան Մէհմէտին. և ի Հա-
40 յոց թվոյն ՌՃԽԳ (1694) մարտի Բ (2) թագաւորեաց սուլթան
Մուստաֆան ի Կոստանդնուպոլիս։.....

Թվոյն 1682 էյի Պաղտատ սեպտեմբերի ամսոյ 5, ետոյ
նաւըն մտայ գնացի Պասրա, դարձեալ նոյեմբերի 30, դարձեալ
եկի ի Պաղտատ, անտի Քէրքիւտ[24], անտի Մուսուլ, անտի Մէր-
45 տին, ետոյ Տիարպէքիր։ Փետրվարի 20 ելայ Տիարպէքիրու, Ցա-
րութեան օրն[25] եկի ի Աերաստիայ, Նոր կիւրակի[26] եկի Թօխաթ

մայրս տեսի, ետոյ ելայ Թօխաթու մայիսի 25 եկի Զիլէ, անտի Էնկիւրի, ետոյ Պէկպազարի, անտի Ըստամպօլ. Ըստամպօլու ելայ յուլիսի 28 եկի Պէլբրղատ, ետոյ Պուտիմ, յօգոստոսի 30 հոսայ ի Պուտիմ, նստայ հոն։

Թվոյն 1685 սեպտեմբերի 12 Նէմցան առաւ Ույվար[27] և էր Ույվարու մէջն տոնաւուտ Խօճօղլին վաշայ։ Եւ էր Նէմցայու սէրազդէրն տուքա տ Լօրէնրն, որ Հէրձուկ կասէին Ալամանակ, 45 օր ծեծ[եց] Ույվարու։ ըերթն ետոյ յիւրուշով առաւ, մէջի Տաճիկրն ամէնն կոտորեցին։ Դարձեալ իմ կողակիցս Ույվարու է, և էր աղգաւ այլազգի և մեծի զարմէ, որժամ որ Նէմցայու ասկէրն Ույվար առաւ սա այն ժամ գերի եղաւ, անտի ուղարկեցինք Վեննայ զինքրն Բ (2) դստերովն. և փոքր դուստրն խիստ սիրուն էր, և էր Զ (6) տարեկան, նա առաւ փիրինծ Սավոյրն, մօրն կամաւն, և ուղարկեաց իւր մօրն, սրտեղ որ է իւր երկիրն։ սա մեծ փտռաց և տեօլվէթի հասաւ, և է անունրն ԺԺմս Օլամպիեայ Պէնէտիքտայ։ Եւ ես ետոյ պսակ առի հետ ընկերոչս Վեննայ, յունվարի 15, սուրբ Ըստեփաննոս եկեղեցին, որ է եպիսկոպոսարան. և էր այն ժամ այս մեծ դուստրս 8 տարեկան։ Դարձեալ որժամ քրիստոնէ եղան ընկերոչս կնկայհայր եղաւ Տիօտաթօն. և դստերրս եղաւ եփրատօրին Հօֆցօլմաստօրին խաթունն, որ է մեծ խազնատար ասրյ (SIC) երիկն թագաւորին, և թվոյն 1686 դեկտեմբերի 22։

Թվոյն 1695 փետրվարի 25 էյի Վէնետիկ, կեցա 8 օր, ետոյ ելայ գնացի փստով Պօլոնիայ[28], անտի Ֆլօրենցայ, անտի Ալիկուռնայ[29], մնացի 3 օր, ետոյ մտայ նաւրն, ապրիլի 11, օրն չորեքշաբթի, գնացի ի Մառսիլիեայ[30], հասանք 6 օրն, ապրիլի 17 մտանք ի Մառսիլեայ, որ է Ֆռանցուզ թագաւոր հրամանուցն, և է լաւ խսկէլէ. || և է քաղքին մէջ տեղն լիմանն, որ թագաւորական չէքտուրիքն հոն են ամէն տարի, ճէմն 40 չէքտուրի է։ Սուրբն Աղքատ Ղազար հոս է նահատակվեր, պատկերն շինած է մէկ աղրիւրի վերայ, որպէս որ գլխատեր են, և այլ Մարիամ Մակդաղենացուն ճկնաց մաղարան հոս է։

Դարձեալ գիտութիւն լինայ ձեր հրամանուցն, երբ Ալիկուռնայու նաւրն մանուս գնաս դէպի Մառսիլիեայ, ծովով 300 միլ է, ուզենաս կու հանդիպիս Ճընվայ[31], որ ինքն իւրեան տուքայ է[32], որպէս որ կրանաուքն Ֆլօրէնցայու, եթէ չուզենաս շիտակ կերթաս Թօլոն[33], որ է Ֆռանցայու թագաւորին և է մեծ լիման. և թագաւորական գուռսան նաւերն, որ են պատերազմօղք ի վերայ ծովուն, ճէմն 90 նաւ է, որ ամենայն ժամ ձմեռն հոն ղըշլայմիշ կանեն։

Թվոյն 1695 յօգոստոսի 30 դարձեալ եկի ի Վէնէտիկ, մնացի 4 օր, ետոյ ելայ Վէնէտիկու եկի Աղուստիեայ, որ է Ավուշփուռք[34] և է Օգոստոս կայսերն շինած. հոս է եփրայտօրին թագն ե հոս կու լինի կոռոնայցիոն[35]։ Անտի գնացի Նիրբնպէռք 4 օրն։ սեպտեմբերի 1, անտի Լայփսիկ, որ է քուրվիրշտն Սաքսին և է լօթռան արենատ (SIC) երկիրն, անտի եկի Պռասլով, որ է Շլէ-

32ա

ղիեայ և է եիրայտօրին, կէսն ուղղավառ են և կէսն լօթոան են։

Թվոյն 1695 հոկտեմբերի ամսոյ 1 ելայ ի Պռասլօվու եկի ի Լօվ հոկտեմբերի 26. այսուհետև գիտելին Աստուած է, թէ այլ ուր պիտի գնամ և մնամ. կամք տեառն օրհնեալ եղիցի։

5 Թվոյն 1696 մայիսի 5 ելա Լէհաց երկրէն՝ Լօվու ընտանեօքս, և ի Հայոց Թվոյն ՌՃԽԵ ապրիլի 25 ելայ Լօվու, եկայ Պռառլօվ ընտանեօքս մայիսի 28։

Թվոյն 1693 օգոստոսի 15 ելա Վենայու ընտանեօքս գնացի դէպ ի Լէհաց երկիրն՝ Վարշավ, անտի մարտի 15 ելա գնացի ի Լօվ։

10 Թվոյն 1695 յուլիսի 10 ելայ Մառսիլիեայու գնացի Ալիկուոնս, Մալթայի նավով, 8 օրն հասանք Ալիկուոնա և ի Հայոց Թվոյն ՌՃԽԵ յունիսի 30, օրն հինգշաբթի։.....

Թվոյն 1688 յուլիսի 1 ծնաւ Մարիյա Թրէզին, օրն երեքշաբթի, կէս օրէն ետոյ՝ 2 ժամուն, ի Վեննայ. և եղև կնքահայր 33ա
15 սորա եիրատօրին Հօֆցօլմաստօրն. և է մեծ իազնատար, որ է անունն Ըսգալվինիծն, որ կու բնակի ի Վեննայ. և ի Հայոց Թվոյն ՌՃԼԷ (1688)-ին յունիսի ԻԱ (21), օրն երեքշաբթի, ի Վեննայ։

Թվոյն 1695 ապրիլի 23 երեքշաբթի, կէս օրէն ետոյ՝ 2 ժամուն, ծնաւ Ֆուրուղինայ Կատարինան Լէհաց երկիրն՝ Լէվ, և ի
20 Հայոց ՌԽՃԴ-ին ապրիլ է ԺԳ (13) ի Լէվ, որ է Լօվ. և սորա կնքահայրն է անունն բան[36] Քրիստոֆ, որ է Լաղուպն Ըստէտգօվիչ և այլ բան Տօմէնիքին կողակիցն, որք բնակին ի Լօվ և են աղգաւ Հայ[37]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իմա Բրեսլավլ, Սիլեզիայում։

2. Հեղինակը նկատի ունի Հունգարիայի համար գերմանացիների և Թուրքերի մղած պատերազմները, որոնք վերջացան 1699 Թ. Կարլովիցի հաշտությամբ։

3. Հեղինակը հավանաբար ուզում է ասել Սաքսոնիայի կուրֆյուրստը, ինքը կուրֆյուրստներից մեկը, որոնք ընտրում էին գերմանական կայսրին։

4. Իմա, լութերական, այսինքն՝ բողոքական։

5. Հեղինակը հավանաբար նկատի ունի Ֆրանսիական թագավոր Լուդովիկոս XVI-ի և Սավոյի իշխանի կնքած հաշտությունը, որին նախորդում էր «Աուղսբուրգյան լիգա»-ի և Լուդովիկոս XVI ի հերթական կռիվները՝ 1688—1697 թթ.։

6. Հեղինակը նկատի ունի Ռիսվիկի հաշտությունը, որը կնքվեց 1697 թվին մի կողմից «Աուղսբուրգյան լիգա»-ի (Անգլիա, Իսպանիա, Շվեցարիա, Հոլանդիա, Սավոյա և այլն), իսկ մյուս կողմից Ֆրանսիայի միջև։

7. Իմա Նյուրենբերգ։

8. Բնագրում այնուհետև հաջորդում է զանազան ապրանքների գների ցուցակ։

9. Խոսքը վերաբերում է Ցան Սոբեսկուն, որը 1683 Թ. սեպտեմբերի 12-ին Վիեննայի պատերի տակ ջախջախեց Թուրքերին և փրկեց Վիեննան։

10. Սաքսոնիայի կուրֆյուրստ Օգոստոս 1-ը լեհական թագավոր դարձավ 1697 Թ., իսկ գահընկեց արին 1704 թվին։

11. Պետր I-ի կողմից Ազովի գրավման 1795 Թ. կռիվներին է վերաբերում ներքոհիշյալ հիշատակարանը, որի տարեթիվը, հեղինակի անուշադրության հետևանքով, դժբախտաբար, մոռացվել է։ «Ի թվականիս հայոց վասն ծօվացեալ մեղաց մերոց Մոսկովի գռալըն եկաւ Ազազու վրան, բազում պատերազմը եղաւ ՃԽ (140) հազար ճէնկէիով, ՃԻ (120) հազար խանտէկ փօրոդով, ու սկուն մեծ պատերազմը արաւ. նախնեաց բնաւ չենկ լվեալ։ Մէկ գիշերը Ռե հարուր (1500) խուպարայ թափեց, թող որիշ օր, ՃԻ (120) օր կովեցաւ չի կարաց առնուլ...» № 8170, էջ 109»։

12. Իմա Բելգրադ, որն այդ ժամանակ գտնվում էր Օսմանյան Թուրքերի գերիշխանության տակ։

13. Իմա. Գուսա (Օֆեն), Դանուբի աջ ափին, որը հետագայում միացավ ձախ ափին գտնվող Պեշտ քաղաքի հետ և կոչվեց Բուդապեշտ։

14. Իմա, Հումոր, փոքրիկ քաղաք Հունգարիայում, կոչվել է նաև Դուրա-Հումոր։

15. Հեղինակը հավանաբար նկատի ունի կամ Ցանինա քաղաքը, Հարավային Արքանիայում, Կորֆու կղզու դիմաց և, կամ Անինա փոքրիկ քաղաքը Արևմտյան Ռումինիայում, հարավսլավական սահմանի մոտերքում։

16. Ըստ Լեն-Գուլի Մուհամմեդ IV-ի գաղնկեցությունը և Սուլեյման II-ի գահակալությունը լինում է 1687 թվին (էջ 166)։

17. Իմա դրոհի եղած օրը։

18. Այս, ինչպես և վերևում նշված մի քանի քաղաքների տեղադրությունը անծանոթ է, հավանաբար գտնվում են Հունգարիայում։

19. Արդյոք Չեխիայում գտնվող Էգեր քաղաքի մասին է խոսքը, Գրազայից արևմուտք։

20. Խոսքը վերաբերում է Հռոմեական սրբազան կայսրության կայսր Լեոպոլդ I-ին և սրա որդի Իոսիֆ I-ին։

21. Արդյոք հունգարական Սեկեսին (կամ Սեգեդ) քաղաքը չէ՞։

22. Անծանոթ վայր, բայց դարձյալ Հունդարիայում։

23. Այժմյան Հունդարիայի սահմանի մոտ, Ռումինիայում, Մուրեշուլ գետի վրա գտնվում է Արադ քաղաքը։ Խոսքն արդյոք այդ քաղաքի մասին է։

24. Քաղաք Իրաքում, ճիշտ ձևը Քարքյուք։

25. Այսինքն՝ 1683 թ. ապրիլի 8-ին։

26. Այսինքն՝ 1683 թ. ապրիլի 15-ին։

27. Անծանոթ վայր։

28. Պոլոնիա, քաղաք Իտալիայում, Մոդենայից հարավ։

29. Իմա, Լիվոռնո, քաղաք Իտալիայում, ծովափին։

30. Իմա, Մարսել, ֆրանսիական քաղաք Միջերկրական ծովի ափին։

31. Իմա, Ժենովա։

32. Այսինքն ինքնավար դքսություն։

33. Տուլոն, ֆրանսիական նավահանգիստ Միջերկրական ծովափին։

34. Աստղսբուրգ, քաղաք Բավարիայում։

35. Այսինքն՝ թագաղրություն։

36. Իմա, պան, աղնվական։

37. Բնագրում այնուհետև սկսվում են թուրքերեն (հայատառ) առածներ և այլ նյութեր։